ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋև ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔՈՒՄ ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ԱՐՄԵՆԻԱ» ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԱԱՌևՏՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամական հարաբերությունները,

հիմնվելով Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների խորհրդի՝ 2002 թվականի հոկտեմբերի 7-ի՝ Մոսկվա քաղաքում Համառուսաստանյան Ցուցահանդեսային Կենտրոնի բազայի հիման վրա Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մշտական գործող ցուցահանդեսների ստեղծման մասին որոշման և այդ նպատակներով համապատասխան պայմանագրաիրավական հիմքերի մշակման անհրաժեշտության վրա,

ի շահ տնտեսական փոխշահավետ համագործակցության խորացման, մշակութային, գիտական, կրթական կապերի զարգացման,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակն է՝ Մոսկվայում Համառուսաստանյան Ցուցահանդեսային Կենտրոնի տարածքում, Հայաստանի Հանրապետության «Արմենիա» ցուցահանդեսաառևտրային կենտրոնի ստեղծումը:

Հոդված 2

Սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված նպատակներով, Ռուսական կողմը Հայկական կողմին 50 տարով վարձակալության է տրամադրում դաշնային նշանակության մշակութային ժառանգության «Ածխային արդյունաբերություն» տաղավարը (այսուհետ՝ Օբյեկտ) տեղակայված՝ ք. Մոսկվա, պողոտա Միր, շ. 119, 68 շինություն հասցեում, 1833 քառ. մետր ընդհանուր մակերեսով՝ տարեկան 1 ռուսական ռուբլի վարձակալության չափով, և անմիջապես օբյեկտով զբաղեցված և նրա հետ պատմականորեն և գործառույթներով կապված հողամասը (այսուհետ՝ հողամաս)՝ 1 ռուսական ռուբլի տարեկան վարձակալությամբ:

Ռուսական կողմը Հայկական կողմին տրամադրում է հողամաս, առանց հողամասի վարձակալման պայմանագրի կնքման իրավունքի համար վճարի գանձման:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի կատարման մասով Կողմերի լիազորված կազմակերպություններն են.

- Հայկական կողմից - «Արմիմպորտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:
- Ռուսական կողմից - Պետական ունեցվածքի կառավարման Դաշնային գործակալությունը:

Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին դիվանագիտական խողովակներով տեղեկացնում է մյուս կողմին իր կողմից լիազորված կազմակերպության փոփոխության մասին:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 3 ամսվա ընթացքում Կողմերի լիազորված կազմակերպությունների կողմից կկնքվեն Օբյեկտի և հողամասի վարձակալության պայմանագրեր սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններով՝ Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան:

Սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան սույն Համաձայնագրի գործողության ժամկետի երկարաձգման դեպքում, Կողմերի լիազորված կազմակերպությունների կողմից կնքվում են վարձակալության նոր պայմանագրեր՝ նույն պայմաններով հերթական 50-ամյա ժամանակաշրջանի համար:

Հոդված 5

Ռուսական կողմը երաշխավորում է, որ Օբյեկտը և հողամասը ազատ են պարտքերից, երրորդ անձանց իրավունքներից, գրավադրված չեն կամ ծանրաբեռնված չեն որևէ այլ կերպ, ինչը կխոչընդոտեր սույն Համաձայնագրի նպատակներով դրանց օգտագործմանը:

Հոդված 6

Օբյեկտը և հողամասը օգտագործվում են միայն սույն Համաձայնագրի 1-ին հոդվածով նախատեսված նպատակներով՝ ցուցահանդեսային-առևտրային գործունեության իրականացման, մշակութային միջոցառումների կազմակերպման և ազգային խոհանոցի ռեստորանի (սրճարանի) բացման միջոցով:

Օբյեկտի և նրանով զբաղեցված հողամասի այլ նպատակներով օգտագործում չի թույլատրվում:

Հոդված 7

Օբյեկտի պահպանման, օգտագործման և պետական պաշտպանության ոլորտում հարաբերությունները կապված հողօգտագործման և քաղաքաշինական գործունեության հետ կանոնակարգվում են Ռուսաստանի Դաշնության հողային օրենսդրությամբ, Ռուսաստանի Դաշնության քաղաքաշինության և ճարտարապետական գործունեության մասին օրենսդրությամբ, շրջակա միջավայրի պաշտպանության մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության՝ ժողովուրդների մշակութային ժառանգության օբյեկտների (պատմական և մշակութային հուշարձաններ) պահպանման, մասսայականացման, և պետական պաշտպանության ոլորտում Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ:

Հոդված 8

Օբյեկտի կապիտալ վերանորոգումը, վերանորոգման և վերականգնման աշխատանքները, շահագործումը և հողամասի պահպանումը, ինչպես նաև շահագործման պատասխանատվության սահմաններում գտնվող ինժեներական կոմունիկացիաների բոլոր տեսակի վերանորոգումները և պահպանումը իրականացնում է Հայկական կողմը՝ իր հաշվին:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի կատարման ընթացքում Կողմերի միջև ծագող վիճելի հարցերը կլուծվեն Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների վարման ճանապարհով:

Հոդված 10

Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 11-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցագիրը դիվանագիտական խողովակներով ստանալու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է 50 տարի ժամկետով՝ հետագա այդպիսի ժամանակահատվածներով, ինքնաբերաբար երկարացման պայմանով, եթե հերթական ժամանակաշրջանի լրանալուց ոչ պակաս, քան մեկ տարի առաջ, Կողմերից երևէ մեկը գրավոր չհայտնի սույն Համաձայնագրի գործողության դադարեցման վերաբերյալ իր մտադրության մասին:

Օբյեկտի և հողամասի վարձակալության պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման կամ լուծման դեպքում սույն Համաձայնագիրը դադարեցնում է իր գործունեությունը:

Կատարված է ք. Մոսկվայում 2011 թվականի հունիսի 28-ին, երկու օրինակով, հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011 թ. սեպտեմբերի 7-ին